

ԵԼՀ գիտխորհրդի՝
22.02.2022թ. կայացած նիստի
թիվ 6 արձանագրություն

Օրակարգ

1. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը:
2. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր :

1. Գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 28-ը: ԵԼՀ ֆակուլտետի ղեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերների և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքին: Նա նշեց, որ որքանով հավաստիացած է, այդ հարցի հետ կապված ամեն ինչ նորմալ ընթացակարգով է գնում և խնդրեց ամբիոնների վարիչներին դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը և ղեկավարների անունները փոխանցել փոխդեկան Մ. Յաղուբյանին:

2. ԵԼՀ ղեկանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների կատարման ընթացքին և խնդրեց, որ մինչև մարտի 10-ը ընկած ժամանակահատվածում բոլոր ուսումնական պլանները հանձվեն ղեկանատ:

3. Գ. Բարսեղյանը անդրադարձավ ընթացիկ հարցերի քննարկամը և խոսքը փոխանցեց ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ. Գ. Ղ., պրոֆեսոր Հ. Բաղդասարյանին՝ ներկայացնելու «Իսպաներենի և իսպանական կենտրոն»-ի բացման գործընթացը:

ԼՍԵՅԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ. Գ. Ղ., պրոֆեսոր Հ. Բաղդասարյանը ներկայացրեց «Իսպաներենի և իսպանական կենտրոն»-ի բացման գործընթացը: Նա նշեց, որ Երևանի պետական համալսարանը և Գրանադայի համալսարանը 2020 թ. սեպտեմբերի 11-ին կնքել են համագործակցության Շրջանակային պայմանագիր, որի նպատակն է զարգացնել երկու համալսարանների միջև ակադեմիական, գիտական և մշակութային կապերը:

Հ. Բաղդասարյանը հավելեց, որ Գրանադայի համալսարանը Իսպանիայի առաջատար համալսարաններից է, որը հիմնադրվել է 1531 թվականին: Համալսարանն ունի 22 ֆակուլտետ, որտեղ սովորում են շուրջ 60 000 ուսանող: Շարժունակության միջազգային տարբեր ծրագրերի շրջանակում ամեն տարի ավելի քան 6000 արտասահմանցի ուսանող սովորում է Գրանադայի համալսարանում, որի շնորհիվ այն դարձել է բազմամշակութայնության իսկական օրրան: Ըստ [Shanghai Academic Ranking of World Universities](#)՝ Գրանադայի համալսարանը դասվում է աշխարհի լավագույն 300 համալսարանների շարքում, իսկ Իսպանիայում այն երկրորդ առաջատար բուհն է:

ԵՊՀ-ի և Գրանադայի համալսարանի միջև Շրջանակային պայմանագիրը կնքելուց հետո, երկու համալսարանների միջև հնարավոր է նաև կնքել հատուկ պայմանագիր (Annexe), որը հնարավորություն կընձեռնի ԵՊՀ-ում ստեղծել

Իսպաներենի և իսպանական մշակույթի կենտրոն: Իսպաներեն լեզուն և իսպանական մշակույթը խթանելու համար Գրանադայի համալսարանը նման կենտրոններ ստեղծել է աշխարհի 10 համալսարաններում: Նշվեցին կենտրոնի գործունեության նպատակները՝

- գիտական փոխհամագործակցության կազմակերպում,
- համատեղ ծրագրերի և պրոյեկտների իրագործում,
- իսպաներեն լեզվին և իսպանական մշակույթին նվիրված տարբեր դասընթացների կազմակերպում,
- տեղեկատվության և դիդակտիկ նյութերի փոխանակում:

Հ.Բադրասարյանը նշեց նաև, որ Իսպաներենի և իսպանական մշակույթի կենտրոնի գործունեության մեկնարկն ապահովելու համար Գրանադայի համալսարանը պատրաստակամ է ԵՊՀ-ի հաշվին փոխանցել 3000 €՝ Կենտրոնի դիմումի համաձայն: Գրանադայի համալսարանը տարեկան 600 € ֆինանսական աջակցություն կցուցաբերի Կենտրոնին՝ նրա պահպանման ծախսերը հոգալու և գիտական, դիդակտիկ և տեսալսողական նյութեր ձեռք բերելու համար:

Ներկայացվեցին նաև Կենտրոնի տնօրենի պարտականությունները՝

- մշակել Կենտրոնի գործունեության ամենամյա ծրագիր և հետևել դրա իրագործմանը,
- մշտական կապ պահպանել Գրանադայի համալսարանի միջազգային համագործակցության տվյալ հարցերով իրավասու բաժնի հետ,
- կոորդինացնել և վերահսկել Կենտրոնի ամենօրյա գործունեությունը,
- իրականացնել Կենտրոնի տեղեկատվական, տեսալսողական միջոցների, ինչպես նաև դիդակտիկ և մատենագիտական միջոցների հաշվառումը:

Հ.Բադրասարյանը նշեց նաև Կենտրոնի գործունեության որոշ կարևոր ուղենիշներ՝

- Ռոմանական բանասիրության ամբիոնի իսպաներենի դասախոսների որակավորման բարձրացման նպատակով առցանց ձևաչափով կազմակերպվել է երկու մասնագիտական դասընթաց հետևյալ թեմաներով՝
 - ✓ «Իսպանական միջնադար. արվեստ և մշակույթ» (2021թ. փետրվար և մարտ, 10 ժամ),
 - ✓ «Քրիստոնեական միջնադարյան արվեստը Իբերական թերակղզում (IV-XI դդ.)» (2021թ. նոյեմբեր, 10 ժամ):

Նշվեց նաև, որ ռոմանական բանասիրության ամբիոնն այսօր փորձում է այս դասընթացները դարձնել շարունակական, ինչպես նաև կազմակերպել առկա ձևաչափով:

- ✓ Գրանադայի համալսարանի համապատասխան մասնագետի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն 2022թ. մարտի վերջին իսպաներենի դասախոսների համար առցանց ձևաչափով կազմակերպել դասընթաց՝

«Իսպաներենի դասավանդման մեթոդիկայի արդի որոշ խնդիրներ»
թեմայով (10 ժամ),

- ✓ Գրանադայի համալսարանի և ԵՊՀ-ի փոխհամաձայնությամբ Գրանադայի համալսարանը կարող է ԵՊՀ գործուղել իսպաներենի դասախոս՝ իսպաներեն դասավանդելու նպատակով:

- Ռոմանական բանասիրության ամբիոնի և Գրանադայի համալսարանի արվեստի պատմության և պատմության համապատասխան մասնագետների ջանքերով նախաձեռնվել է համատեղ հետազոտական ծրագիր՝ «Հայաստան և իսպանախոս աշխարհ. պատմամշակութային կապեր» թեմայով, որի արդյունքում նախատեսվում է Իսպանիայում հրատարակել մենագրություն: Ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը Իսպանիայում, հատկապես Անդալուզիայում առկա արխիվային նյութերում հայերի և Հայաստանի մասին տեղեկատվության ուսումնասիրությունն է:

Հ.Բաղդասարյանը համոզմունք հայտնեց, որ Կենտրոնի ստեղծումը կարող է նոր խթան դառնալ նման ծրագրերի հետագա իրագործման համար, որում կարող են ներգրավվել ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետներ:

- **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**՝ ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը կարևորեց կենտրոնի դերը ռոմանական բանասիրության ամբիոնի իսպանական բաժնի գործունեության համար: Արտահայտվեցին նաև անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Գասպայանը, թիվ 1 ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Մ.Ապրեսյանը: Նրանք ողջունեցին նախաձեռնությունը՝ հույս հայտնելով, որ Կենտրոնը նպաստավոր գործունեություն կծավալի և խթան կհանդիսանա թե՛ ԵԼՀ ֆակուլտետի, թե՛ ԵՊՀ-ի միջհամալսարանական մասնագիտական կապերը ընդլայնելու հարցում, ինչպես նաև կարևոր դեր կխաղա ամբիոնի մասնագիտական գրականության մշտապես արդիականացման խնդրում: Կենտրոնի ստեղծումը նոր հեռանկարներ կբացի Գրանադայի համալսարանի հետ գիտահետազոտական և ուսումնական տարբեր ծրագրեր մշակելու համար:
- **ՈՐՈՇԵՑԻՆ**՝ Երաշխավորել իսպաներենի և իսպանական մշակույթի կենտրոնի ստեղծման առաջարկը: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Պ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Պ., դոցենտ՝



Մ.Դալալյան

22.02.2022.թ.